

Ա Ձ Գ Ա Կ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

ԱՅՍ ՅԱԻԵԼՈՒԱԾԸ


Համապատասխան հիմնադրության 75ամեակին պուգադիպող «Ապդակ» ի այս յաւելումը կը միտի ծանօթացնել Լիբանանի մէջ Համապատասխանի ծաւալած գործունէութիւնն ու նոր նախաձեռնութիւններն ու իրագործումները, սակայն յաւելումը 75ամեակի մեծ իրադարձութեան նուիրում չէ: Սոյն յաւելումին նիւթերը տրամադրած են Համապատասխանի Շրջանային վարչութիւնն ու միաւորները: Յաւելումը ունի աւելի տեղեկատուական բնոյթ, քան վերլուծական:

Ընթերցողը, կարդալէ ետք Համապատասխանի գործունէութեան մասին տրուած ամփոփ տեղեկութիւնները, վստահաբար պիտի հաստատէ, թէ համաշխարհային իմաստով նահանջի մէջ գտնուող մշակոյթը, աւանդական հասկացողութեամբ մշակոյթը անադարտ պահպանելը թէև շատ դժուար առաքելութիւն է, այսուհանդերձ հոսանքն ի վեր թիավարելու պատրաստակամութիւնն ցուցաբերող միութիւններ կան տակաւին, որոնց շարքին Համապատասխանը փաստօրէն: Համաշխարհայնացման յուրջ վտանգին պուգահեռ տնտեսական տագնապը եւս անշուշտ իր աւերը կը գործէ, սակայն Համապատասխանը կը շարունակէ մնայ պատնէշի վրայ, ի խնդիր ապագային ինքնուրոյն դիմագիծի պահպանման, ի խնդիր հայ մշակոյթի «բարգաւաճման»:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ԱՅՍՕՐ



Լ. Շանթ կեդրոնի «Գ. եւ Հ. Արմէնեան» սրահը, որուն բացման հանդիսութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 6 Յունիս 2003:




ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Շ Ա Ր Յ Ա Ձ Ր Ո Յ Յ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆԻ
ՎԱՐԻՉ-ՏՆՕՐԷՆ՝

ԸՆԿ. ՅԱԿՈՒ ՀԱԻԱԹԵԱՆԻ ՀԵՏ
(ՏՊԱՐԱՆԻ ՆՈՐ ԿԱԶՄԱԾՆԵՐՈՎ
ՍԱՐՔԱԴՈՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ)



Նիկոլ Աղբալեանի Ա. Մամուլը

ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆ - ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ



Շ Ա Ր Յ Ա Չ Ր Ո Յ Ց

ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՄԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆԻ ՎԱՐԻՉ-ՏՆՕՐԷՆ ԸՆԿ. ՅԱԿՈՒԲ ՀԱԻԱԹԵԱՆԻ ՀԵՏ (ՏՊԱՐԱՆԻ ՆՈՐ ԿԱԶՄԱԾՆԵՐՈՎ ՍԱՐԵԱՒՈՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

PhotoRAFFI

ՀԱՐՑՈՒՄ.- Կարելի է հակիրճ ձեռով ներկայացնել Համագգայինի Հրատարակչական գործի սկզբնաւորութիւնը եւ ընդհանուր հոլովոյթը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Համագգայինի Հրատարակչական գործի իբրեւ սկիզբի թուական պէտք է նկատի ունենալ 1931 թուականը, այլ խօսքով, Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան հիմնադրութենէն 3 տարի ետք:

1931ին ձեւարանի մէջ կը բացուէր Համագգայինի տպարանը եւ իբրեւ առաջին գործ լոյս կ'ընծայէր ձեւարանի ծրագիր-կանոնագիրը: Այս ժա-

մանկամիջոցին տպարանը տպագրող մամուլ չունէր, պարզապէս գրա-չարութիւնը եւ սրբագրութիւնը տեղի կ'ունենար ձեւարանէն ներս:



Սակայն ձեւարանի արդէն իսկ ծանրաբեռնուած պիւտճէն կը դժուարացնէր տպարանային եւ հրատարակչական գործի ընթացքը: Այս պայմաններուն մէջ Համագգայինի հիմնադիրներէն Նիկոլ Աղբալեան կ'առաջարկէ լուծում մը, հաշուակցելով ձեւարանին հետ, տպարանը կը դարձնէ իր սեփականութիւնը, անոր առաքելութեան շարունակականութիւնը ապահովելու համար: Տպարանը կ'անուանուէր «Յոյս» եւ կը ծաւալէր

դասադիրքերու եւ այլ գիրքերու հրատարակչական աշխատանք:

1944ին այս տպարանէն կը սկսէր լոյս տեսնել ձեւարանի Շրջանաւարտից Միութեան «Ակօս» հանդէսը, 1946ին, կը ձեւարկուէր Լ. Շանթի ամբողջական երկերու հրատարակութեան:

1947ին, Ն. Աղբալեանի մահով եւ իր կտակով, տպարանը կը դառնար Համագգայինի սեփականութիւնը եւ Կեդրոնական Վարչութեան կողմէ կ'անուանուէր «Համագգայինի Տպարան»:

1948ին, Համագգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Գասպար Իփիկեան իր գրասենեակը կը հաստատէր տպարանի կողքին, եւ Համագգայինի գործափար-քարտուղարի իր պաշտօնով կը սկսէր գրախանութի եւ գրատարածի գործի ծաւալման: Այս թուականէն ետք կը ձեւարկուէր ընթերցանութեան գիրքերու եւ մանկապատանեկան շարքերու, ինչպէս նաեւ կուսակցական գրա-



կանոնադրական հրատարակչության աշխատանքին:

Հ.- Ի՞նչու Համազգայինի «Վահե Սեթեան» տպարան անուանումը:

Պ.- Գործը որոշ դժուարություններով, նուաճումներով եւ տեղատուութիւններով կը շարունակուէր մինչեւ 1965 թուական, երբ Համազգայինի կեդրոնական Վարչութեան ատենապետ եւ յետոյ՝ պատուոյ նախագահ՝ Պրն. Վահէ Սէթեանի անձնական ներդրումով, կարելի կ'ըլլար տպարանը օժտել արդիական նոր կազմածներով: Առաջին հանգրուանին ինք կը ստանձնէր անոր ամբողջական յանձնաձեւը, սակայն տպարանը կը գործէր «Համազգայինի» անուան տակ: Հանգրուան մը այս դրութեամբ անցնելէ ետք, պրն. Վահէ Սէթեան տպարանը իր կազմածներով կը յանձնէր Համազգայինի տնօրինման եւ կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէր տպարանը անուանել Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան: Հոս հարկ է նշել որ 1965ին հանգուցեալ ընկ. Երուանդ Մոնոֆարեան կը նշանակուէր տնօրէն եւ Համազգայինի ստանձնումէն ետք կը վերահաստատուէր անոր տպարան-հրատարակչական գործի տնօրէնի պաշտօնը: Ընկերը այս պաշտօնը կը վարէր մինչեւ 1997 թուական:

Տասը տարիներ Համազգայինի կեդրոնական Վարչութեան գործադիրութեան պաշտօնը վարելէ ետք, 1998ին Համազգայինի տպարան-հրատարակչական տնօրինման գործը կը վստահուէր ինծի: Կը գիտակցէի գործի տարողութեան եւ առաքելութեան խիստ կենսական անհրաժեշտութեան եւ Համազգայինի կրթամշակութային ընդհանուր գործին ամբողջական համոզումը եւ հաւատքը ունենալով, կը ստանձնէի այս դժուար պարտականութիւնը:

Հ.- Եթէ կարելի է անդրադառնալ տպարանի ներկայ հանգրուանի մասին:

Պ.- 1975ի քաղաքացիական պատերազմի բռնկումով եւ մայրաքաղաքի բաժանումով՝ (արեւելեան եւ արեւմտեան կողմ), հետզհետէ տպարանը պիտի սպրէր մեծ դժուարություններ: Նկատի ունենալով որ տպարանը հաստատուած էր արեւմտեան Պէյրութի մէջ, պաշտօնէութեան փոխադրութեան դժուարությունը իր ժխտական անդրադարձը կ'ունենար գործի հեղուկ ընթացքին վրայ: Կը հասնէր հանգրուան մը, որ տպարանային մարզը կը գտնուէր անդամալուծութեան վտանգին դիմաց, որուն միակ լուծումը կ'ըլլար 1988-89ին անոր փոխադրութիւնը Պուրճ Համուտի Շաղգոյեան կեդրոն: Որոշ շրջան մը ետք, Պուրճ Համուտի մէկ թաղամասին մէջ գործող Համազգայինի փոքր գրախանութիւնը դարձեալ պիտի փոխադրուէր Շաղգոյեան կեդրոն: Այսօր Համազգայինի տպարան-հրատարակչականը, իր գրատարածով եւ գրախանութով ամբողջութեամբ հաստատուած է «Շաղգոյեան կեդրոն», ուր կը գտնուի նաեւ Համազգայինի եւ կուսակցական գրականութեան ամբողջ գրապահեստը:


Այսօր նոր կազմածներով եւ տարածքի ամբողջական նորոգութեամբ տպարանը կը գործէ աւելի լայն հնարաւորութիւններով: Ունինք փորձառու եւ աշխոյժ անձնակազմ ու պաշտօնէութիւն, որ հիմնական գրականներն է մեր ծրագիրներու յաջողութեան: Տպարանի այս ընդարձակման առիթով կը շնորհաւորեմ նաեւ զիրենք բոլորը, ինչպէս նաեւ այն բոլոր անհատները որոնք անցնող աւելի քան երեսուն տարիներուն պաշտօնավարեցին այս հաստատութենէն ներս եւ բերին իրենց ներդրումը:

Այսօրուան այս իրագործումը վստահաբար բոլորին համար հպարտառիթ երեւոյթ է, որովհետեւ հաւաքական ու հետեւողական աշխատանքի մը արդիւնք է, որուն մէջ բոլորը ունեցած են իրենց անջնջելի դրոշմը:

Շնորհակալութեան խօսք նաեւ Համազգայինի կեդրոնական Վարչութեան կողմէ վերջին երկու քառամեակներուն յառաջացած իրերայաջորդ երկու իննամակալ մարմիններուն, որոնց ճիգին եւ ներդրումին արգասիքն է նաեւ այսօրուան իրագործումը:

Հ.- Եթէ կարելի է հակիրճ ծանօթութիւն փոխանցէք հրատարակչական ընդհանուր կառոյցին մասին:

Պ.- Համազգայինի հրատարակչա-



կան կառոյցը կը բաժնուի հիմնական չորս մասերու՝ Տպարան, Հրատարակչական, գրատարած եւ գրախանութ: Այս բոլորի տնօրինումը վստահուած է տնօրէնութեան եւ Համազգայինի կեդրոնական Վարչութեան կողմէ յառաջացած իննամակալ մարմին մը կը հետեւի գործի ընդհանուր ընթացքին:

Հրատարակչական ծրագիրներու գործադրութեան մէջ, իբրեւ ուղեցոյց միշտ նկատի կ'առնուի Համազգայինի Հրատարակչական ընդհանուր քաղաքականութիւնը, որ կ'որդեգրուի Համազգայինի գերագոյն ժողովին կողմէ: Անոր գործադրութեան կը հսկէ կեդրոնական Վարչութիւնը կամ անկէ յառաջացած հրատարակչական մարմին մը:

Տպարանը կ'իրականացնէ հրատարակչական գործի հետ առնչուած բոլոր աշխատանքները: Այստեղ պէտք է հաստատել, որ տպարանը Համազգայինի Հրատարակչական գործին աւելցնելով, կը գործէ նաեւ վաճառականական հասկացողութեամբ իբրեւ ամբողջական կառոյց: Այս մարզը կարեւոր է պիտեմէական հաւասարակշռումի իմաստով, որովհետեւ, այլապէս դժուար պիտի ըլլայ միայն գիրքերու եւ դասագիրքերու վաճառքէն համապատասխան պիտեմէ գոյացնել եւ շարունակել ու ծաւալել աշխատանքը:

Գրատարածի գործը ունի աւելի լայն տարողութիւն, նկատի ունենալով որ գործակցութիւն հաստատուած է արտասահմանեան բաւական մեծ թիւով կրթական եւ մշակութային հաստատութիւններու եւ գրատարածման կեդրոններու հետ: Գրատարածման մարզը ինքնին բաւական լայն հորիզոններ կը բանայ մեր դիմաց: Գրախանութիւնը արդէն ծանօթ է ձեզի եւ հոն կրնաք գտնել օրաթերթ, պարբերաթերթ եւ Համազգայինի հրատարակութիւններէն անկախ նաեւ այլ հրատարակչատուներու գիրքերը:





մագալյինի կեդրոնական վարչութեան որոշումով վերջերս, երբ Ֆրանսայի IMPRIMAR տպարանը դադարեցաւ գործելէ, գնեցինք անոր կազմածները, որոնք բաւական մեծ կարողականութեամբ օժտուած են, ինչպէս նաեւ կը գոհացնեն մեր տպագրական, ֆիլմերու եւ փլաքներու պատրաստութեան արդի պահանջները: Ասոր զուգահեռ կարգ մը կազմածներ ենթարկուեցան հիմնական բարենորոգութիւններու եւ այսօր, հասարակութեան դիմաց կը ներկայանանք աւելի լայն կարելիութիւններով: Անշուշտ, այս մէկը հանգրուան մըն է, վստահաբար տակաւին ընդարձակման եւ գործի ծաւալման լայն հնարաւորութիւններ եւ ծրագիրներ կան, որոնք հանգրուանային ձեւով պիտի իրագործուին:

Հ.- Եթէ յաւելեալ տեղեկութիւններ տաք տպարանի մասին:
Պ.- Տպարանը այսօր օժտուած է տպագրական նոր կազմածներով: Հա-



Հ.- Ընդհանրապէս ինչպէ՞ս կը գնահատէք ձեր յաճախորդութիւնը:

Պ.- Հրատարակչական գործին առընթեր, մեզի հետ կ'աշխատակցին մեր կուսակցական միակորները, ուղեկից միութիւնները, յարանուանութիւնները, ինչպէս նաեւ այլ կրթական եւ մշակութային հաստատութիւններ եւ կառույցներ: Վաճառականական գործերու իմաստով, ունինք մնայուն յաճախորդներ: Այստեղ պէտք է մանրամասնել տուեալ մը, որ կարեւոր է եւ օգտակար շատերու ենթագիտակցութեան մէջ Համագալյինի տպարանը միայն գիրք եւ դասագիրք հրատարակող հաստատութիւն է: Այո՛, իր առաքելութիւնը ա՛յս է, սակայն Համագալյինի տպարանը նաեւ տպարան է ամբողջական հասկացողութեամբ եւ կրնայ վաճառականական դիտանկիւնէն գոհացնել բոլորին պահանջները, նախանձախնդիր մնալով գործի որակին եւ գեղարուեստական ճաշակին:

Հ.- Արդեօ՞ք դժուարութիւններ եւ խոչընդոտներ կը դիմագրաւէք:

Պ.- Բնական է որ որեւէ հաստատութեան աշխատանքը առանց դժուարութիւններու չընթանար, սակայն այս պարագային կայ մատնանշելի մէկ հանգամանք: Այս տպարանը բոլորին տպարանն է, հաւաքական այս հասկացողութիւնը պէտք է արմատանայ բոլորի մտածողութեան մէջ: Այս տպարանին հասոյթը կ'օգտագործուի հրատարակչական եւ կրթական նպատակներու: Սակայն, տպարանը միութենական պատկանելիութիւն ունենալով հանդերձ, կը հետեւի վաճառականական բոլոր նորմերուն եւ կը փորձէ բաւարարել շուկայի բոլոր պահանջները եւ քայլ պահել մրցակցութեան հետ: Այստեղ հարկ է երախտագիտական խօսք ուղղել այն բոլոր հաստատութիւններուն եւ միութիւններուն որոնց գործակցութիւնը տպարանին հետ կը մնայ անկեղծ ու անվերապահ եւ այս մէկը գիտակցական մօտեցում է: Վստահաբար այս փոխադարձ գործակցութեան միջնորդող տիրապետող պիտի մնայ գալիք հանգրուաններուն եւ մենք հաւաքական ճիգով պիտի կարողանանք տէր կանգնիլ մեր առաքելութեան եւ շրջանցել ամէն տեսակի խոչընդոտ եւ արգելք:

Հ.- Ներկայիս հրատարակչական ի՞նչ ծրագիրներ կը մշակէք:

Պ.- Հրատարակչական մարզէն ներս այս տարի ծրագրած ենք վերախումբագրուած ձեւով վերատպել Յեղափոխական Գրականութեան սպառած կարեւոր շարքեր: Ասոր գուգահեռ, գարկ պիտի տրուի պատանեկան եւ մանկական գրականութեան: Յատկապէս այս մարզէն ներս գործակցութիւն հաստատած ենք հայրենի կարեւոր թիւով հրատարակչատուներու հետ եւ եկող շաբաթ հրատարակի վրայ պիտի ըլլան մանկական եւ պատանեկան գրքոյկներ, որոնք պատրաստուեցան իբրեւ միացեալ հրատարակութիւն Համազգայինի եւ հայրենի «Ձանգակ 97» հրատարակչատուներուն: Գործակցութեան այս մարզը ընդարձակելու եւ ծաւալելու լայն հեռանկարներ կան, որոնք պիտի գան հարստացնելու մեր մանկական ու պատանեկան գրականութիւնը: Կը մնանք քաջալեր նաեւ սփիւռքահայ գրողներու նոր գործերու հրատարակութեան եւ արդէն երկու շաբաթէն լոյս կը տեսնէ Յ. Գեղարզի «Յիշատակի խնկաման» գիրքը, իբրեւ Համազգայինի հրատարակութիւն:

Հրատարակչական գործի յաջողութիւնը սակայն մեծապէս պայմանաւորուած է մեկենասներու ապահովմամբ եւ ընթերցողներու աջակցութեամբ: Աշխատանքներ, որոնց համար ամէն ճիգ ի գործ կը դնենք:

Այս հարցազրոյցին մէջ թէեւ ճիշդ չէ անդրադառնալ ընթերցանութեան ընդհանուր եւ համաշխարհային տագնապին, որուն պատճառները ու հետեւանքները ծանօթ են բոլորին: Սակայն որոշած ենք թիւովարել հոսանքն ի վեր, վստահելով նաեւ մեր կրթական եւ մշակութային հաստատութիւններու բարեբար դերակատարութեան եւ ներդրումին:

Հ.- Գրատարածման աշխատանքի ծիրէն ներս ի՞նչ մօտակայ ծրագիրներ ունիք:

Պ.- Շուտով կ'իրականանայ Համազգայինի web-siteի վրայ գրախանութի մը հաստատումը, որուն մէջ ընթերցող անհատը առաջին առիթով պիտի գտնէ Համազգայինի բոլոր հրատարակութիւնները, գիրքերու մասին հակիրճ ծանօթութիւններ եւ իր ապսպրանքները արագօրէն ստանալու յարմար եւ օգտաշատ դրութիւն մը:

Ասոր կողքին ցուցահանդէսները, շրջուն վաճառքները, պիտի մնան գրատարածման գործին մնայուն առաջադրանք: Կը փորձենք նաեւ արտասահմանի մեր գրատարածման ցանցը ընդլայնել եւ յոյսով ենք որ ի մօտոյ այս մէկը նաեւ կու տայ իր դրական արդիւնքը:



Հ.- Դասագիրքերու պատրաստութեան ծրագիրներ կա՞ն:

Պ.- Այո՛, ընթացքի մէջ է նախակրթարանի 4-5-6րդ դասարաններու Հայոց Պատմութեան դասագիրքերու շարքի մը պատրաստութիւնը: Այս տարի արդէն իր նախնական ձեւին մէջ այս դասագիրքերը դրուեցան փորձարկման: Ունեցանք բազմաթիւ հանդիպումներ դասաւանդ ուսուցիչներու եւ տնօրէններու հետ, կատարեցինք որոշ պատշաճեցումներ: Կը մտածենք այդ բարեփոխուած տարբերակները դարձեալ փորձարկել եկող տարեշրջանին, որմէ հետք անցնիլ վերջնական հրատարակութեան աշխատանքին, մասնագիտական եւ ամբողջական դասագիրք մը ունենալու հեռանդկարով:

Ազգային Ուսումնական Խորհուրդին հետ գործակցաբար նաեւ որոշած ենք վերահրատարակել կարգ մը դասագիրքեր, ինչպէս նաեւ պատրաստել նորերը:

Հ.- Այլ ըսելիք եթէ ունիք:

Պ.- Համազգայինի տպարան-հրատարակչականը այսօր կը թեւակոխէ նոր հանգրուան: Կասկածէ վեր է որ մարտահրաւէրներն ու դժուարութիւնները միշտ ալ պիտի մնան առկայ, նկատի ունենալով այս մարզի



խիստ անհրաժեշտութիւնը եւ յանձնառութեան լայն տարողութիւնը: Սակայն մենք կը վստահինք մեր գործին, գիտակից ենք այդ գործի հրամայական պահանջներուն եւ ճիգ պիտի չխնայենք յաջողութեամբ պսակելու մեր բոլոր ծրագիրները:

Մինչ այդ, այս առիթով կ'ուզեմ յատուկ շնորհակալութեան խօսք ուղղել այն բոլոր անհատներուն, որոնք մեկենասութիւններով եւ օժանդակութիւններով իրենց մասնակցութիւնը կը բերեն այս գործի շարունակականութեան: Շնորհակալութեան յատուկ խօսք Սէթեան ընտանիքին, որ միշտ իր բարոյական եւ նիւթական աջակցութեամբ եւ նախանձախնդիր մօտեցումով կ'օժանդակէ մեր աշխատանքներուն եւ ծրագիրներուն:

Երախտագիտական խոր զգացումներով, յատուկ շնորհակալութեան խօսք «Գ. Կիւլպէնկեան» հիմնարկութեան եւ անոր հայկական բաժանմունքի տնօրէն պրն. Զաւէն Եկաւեանին, որուն համար կրթական գործի կողքին հրատարակչական գործը նոյնքան կարեւորութիւն կը ներկայացնէ եւ ան միշտ ալ նեցուկ կը կանգնի մեր բոլոր ծրագիրներուն յաջողութեան:

Եւ վերջապէս շնորհակալութեան խօսք բոլոր անոնց, որոնք իրենց գործակցութեամբ եւ ներդրումով մասնակից կը դառնան այս առաքելութեան հեզասահ ընթացքի ապահովման:

Շնորհակալութիւն նաեւ «Ազդակ»ին, այս առիթին համար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ԱՅՍՕՐ

Գիր, գրականություն, մշակույթ...

Կա՞ն արդեօք այլ հիմեր, որոնց կառչած մնացած ըլլայ ազգ մը ամբողջ, դարեր շարունակ, իր գոյատևումի պայքարը մղելով...

Գիր, գրականություն, մշակույթ... Աւելի ուշ՝ Համազգային հայ կրթական եւ Մշակութային Միություն, նշանաբան ունենալով մեծ բանաստեղծին հետեւեալ բառերը. «... Անունս է Պայքար եւ վախճանս Յաղթանակ»:

Կարելի՞ է պահ մը երեւակայել այն գերմարդկային ճիգը, զորս Համազգայինի անդամները ի դործ կը դնեն՝ իւրաքանչիւր հայու մէջ բարձր պահելու մտքի ու հոգիի լուսաւորութեան ջանքը, իր հիմնադիրներուն՝ Շանթերու, Աղբալեաններու, Իփէկեաններու ու Բ. Կանաչեաններու ոգիին ու հաւատքին հաւատարիմ ու միայն ու միայն հիմնական նպատակ ունենալով նպաստել հայ մշակույթին եւ հայեցի դաստիարակութեան զարգացման ու տարածման:

Երբեմնի հայհոս Լիբանանը, Համազգային հայ կրթական եւ Մշակութային Միութեան գլխաւոր օրրանը ըլլալով, առջին իսկ օրէն ունեցած է անզուգական դեր մը, հանդիսանալով հիմնադիր տարրը թատերական, երաժշտական ու պարային բնագաւառներուն մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն, չանսալով տեղացող ահաւոր ռումբերու տարափին, հաւատարիմ իր առաքելութեան, Համազգայինի Լիբանանի Շրջ. Վարչութիւնը, հայ նորահաս սերունդներուն հոգեմտաւոր դաստիարակութիւնը գերադաս համարելով եւ հայ մշակույթի հանդէպ սէրն ու հետաքրքրութիւնը վառ պահելու առաջադրանքով, ի գին հսկայական զոհողութիւններու կը ձեռնարկէ Շանթ Կեդրոնի շինարարական աշխատանքին, զայն դարձնելու բազմահարկ մանուկներու ու պատանիներու համար իր տեսակին մէջ մշակութային եզակի օճախի մը:

1987 թուականներուն, այդ «խօլ» երազը կը դառնայ իրականութիւն եւ Պ. Համուտի սրտին վրայ կը բարձրանայ քառայարկ այն շէնքը, որ կարծէք միեւնոյն ժամանակ դառնալու էր նաեւ հայկական Մշակութային Կեդրոն:

Այսօր, Համազգայինի հովանիին տակ գործող բոլոր միաւորներու եւ մասնաճիւղերու գործունէութիւնը, որոնք էապէս կարեւոր տեղ կը գրաւեն լիբանանահայ մշակութային կեանքին մէջ, կարելի է բաժնել երեք հիմնական մասերու.

- 1.- Մանկապատանեկան խումբերն ու գեղարուեստական դպրոցները:
- 2.- Շրջանային վարչութիւններու մշակութային նախաձեռնութիւնները:
- 3.- Մասնաճիւղերու եւ շրջաններու մշակութային գործունէութիւնները:

Լ. ՇԱՆԹ ԿԵԴՐՈՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՅՆԵՐԸ ԵՒ ԽՈՒՄԲԵՐԸ

Բ. Կանաչեան երաժշտական քոլէճը, որ արդէն կը գործէր 1983էն ի վեր՝ Ազգ. Նուպարեան վարժարանէն ներս, հետզհետէ իր գործունէութեան ծիրը ծաւալելով, կը հասնի մինչեւ Երեւանի Կոմիտասի անվան երաժշտանոց, կնքելով պաշտօնական համա-



Լ. ՇԱՆԹ ԿԵԴՐՈՆ

ձայնագիրներ, ապահովելով վկայականներ, մնալով միշտ ոչ շահադիտական հաստատութիւն մը, որդեգրելով բազմալեզու դասուանողութեան միջոցառումներ:

Մասնագէտ տնօրէնի աշալուրջ հսկողութեամբ ու որակաւոր ուսուցչական կազմով, ակադեմական ծրագիրով, կանոնաւոր կերպով կը գործէ երաժշտական քոլէճը, պատրաստելով թէ՛ արհեստավարժ, թէ՛ սիրողական շրջանաւարտներ:

Բ. Կանաչեան երաժշտական քոլէճը կ'իրագործէ նաեւ, իր նախաձեռնութեամբ, աշակերտական տարեկան ներքին ունկրդրութիւններ, հաշուետու համերգներ, արտադպրոցական ձեռնարկներ, համերգ-դասախօսութիւններ, դասարանային համերգներ, համալիրանանեան մրցանքներու մասնակցութիւն, հիւր արուեստագէտներու համերգներու եւ «Master Class»երու կազմակերպում, ինչպէս նաեւ երկու տարին անգամ մը «Մարկո Պապիկեան» մրցանքի կազմակերպումը:

Թորոս Ռոսլին կերպարուեստի դպրոցը կը գործէ մեծերու ու փոքրերու յասուկ բաժիններով, որոնք կանոնաւոր կերպով կը հետեւին գեղանկարչական դասընթացներու, վկայեալ երիտասարդ հանրաժանօթ արուեստագէտներու հսկողութեամբ, յաճախ ունենալով բացօդային, ուղղակի բնութեան ծոցին մէջ աշխատելու հնարաւորութիւններ, վիտէօ երիզներու ընդմէջէն ծանօթանալով աշխարհահռչակ անուանի գեղանկարիչներու, ունկնդրելով արուեստի գանազան դպրոցներու մասին դասախօսութիւններ, ունենալով աշակերտական ու աւարտական ցուցահանդէսներ, ինչպէս նաեւ այցելելով Քաղաքի արուեստի տարբեր ցուցասրահները:

Քնար պարախումբ եւ Գայիանէ պարի դպրոցը տարեկան իր պարային ելոյթներով մեծ խանդավառութիւն կը ստեղծէ զաղուլթէն ներս, արժանանալով որոտընդոստ ծափահարութիւններու:



«Քնար» պարախումբ

Քնար պարախումբը իր տարեկան տասնեակ մը ելույթներէն բացի կ'ունենայ նաեւ շրջապատյոյններ, ինչպէս նաեւ լիբանանեան պետական մակարդակով պաշտօնական հանդիսութիւններու բացման արարողութեանց ու կարեւոր փառատօներու հրաւիրուելով իր մասնակցութիւնը կը բերէ: Իսկ Գայիանէ պարի դպրոցը, հիմնուած՝ 1989ին, կը գործէ յատուկ ծրագրով, հայրենի պարուսույցի բժախնդիր ու խստապահանջ հսկողութեան տակ, որոնք աւարտելէ ետք իրենց հնգամեայ դասընթացքները, կը փոխանցուին Քնար պարախումբ:

Կարկաչ Մանկապատանեկան եւ Երէցներու երգչախումբը իր տարիքային երեք բաժանումներով, ամէն տարի կը պատրաստուի տարեկան իր համերգներուն՝ նոր ու յատուկ «Կարկաչ»ին համար հայրենի արուեստագէտներու կողմէ յորինուած երգերով, որոնք լիբանանահայութեան թէ օտար ունկնդիրին հօգին կը լեցնեն մանկական մաքուր ու ջինջ ձայներով:

Կարկաչը իր լման կազմով սերտ կապեր ու զործակցութիւն հաստատած է Արցախի «Վարանդա» երգչախումբի անդամներուն հետ, նոյնիսկ փոխ այցելութիւններ իրագործելով: Ան կը պատրաստուի նաեւ այլ միջգաղութային այցելութիւններու:

- Գ. Իփէկեան թատերախումբը, որ դարձած է լիբանանեան թատրոնի պատմութեան առաջին հիմնաքարը, հիմնուած նոյնինքն Համազգայինի հիմնադիրներէն՝ Գ. Իփէկեանի ջանքերով, առաջին օրէն իսկ յեղաշրջումներ կը կատարէ: Ամբողջ տասնամեակներ տաղանդաւոր բեմադրիչներու շունչին տակ թրծուած Գ. Իփէկեան թատերախումբը յաղթանակէ յաղթանակ շրջեցաւ նաեւ գաղութէ գաղութ, մինչեւ հեռուոր Ամերիկաները:

Թատերախումբը երբեք չընկրկեցաւ ու կը յամառի շարունակել իր երթը հակառակ բազմապիսի դժուարութիւններու:

Համազգայինի Լիբանանի Շրջ. վարչութեան կարեւոր վերջին իրագործում-նախաձեռնութիւնը եղաւ «Արեգ» մանկապատանեկան թատերախումբի ծնունդը, որ առաջին իսկ ելույթէն ապահովեց վարպետի ու մասնագէտի յատուկ յաջողութիւն: Կարճ ժամանակամիջոցի մէջ, ան յաջորդաբար բեմ հանեց Թումանեանի հեքիաթները, արժանանալով մեծին ու փոքրին բարձր գնահատանքին հաւասարապէս, նոյնիսկ կատարելով շրջապատյոյններ:

Չմունանք նաեւ յիշելու «Գուսան» երգչախումբը, որ իր կարգին ունեցաւ փառքի օրեր, սակայն գործեց ընդմիջումներով, իսկ վերջին տարիներուն հանրութեան ներկայացաւ «Հայաստան» նուագախումբի եւ ջութակներու համոյթի ընկերակցութեամբ, մասնակցելով փառատօներու եւ միջազգային այլ երգահանդէսներու:

2.- ՄԱՍՆԱՃԻՒԼԵՐՈՒ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համազգայինի Լիբանանի Շրջ. վարչութեան հովանիին տակ կը գործեն նաեւ Համազգայինի մասնաճիւղեր, որոնք որոշ վերիվայրումներով, մշակութային աշխատանք կը ծաւալեն իրենց շրջաններուն մէջ:

Քաղաքի, էշրեֆիէի, Պ. Համուտի, Անթիլիասի,



Այնճարի եւ այլ շրջաններու մէջ մասնաճիւղերը կը գործեն ապակեղրոնացեալ հասկացողութեամբ, ունենալով իրենց դասախօսական ստույխները, թատերախումբերը, երգչախումբերը կամ գեղարուեստական այլ գործունէութիւնները, ինչպէս՝ Այնճարի մէջ «Լուսարձակ 40» թատերախումբը եւ «Կոմիտաս» երգչախումբը, որոնք յաճախ դուրս գալով իրենց շրջանէն կը ներկայանան հայ թէ օտար հանրութեան:


3.- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համազգայինը իր հիմնադրութեան առաջին օրէն իսկ, երբեք վհատիլ չգիտցաւ: Ընդհակառակը, եղաւ միշտ նախաձեռնող, չվախցաւ հրաւիրելու նոյնիսկ մեծ թիւով խումբեր: Տակաւին բոլորիս մտքերուն մէջ թարմ են ու յաճախ կը յիշենք Մարի Ռոզ Ապուսէֆեաններն ու Նուրիձա Մաթէոսեանները, Արաքսիա Դալթեանները, Քրիստինէ Սահակեանն ու Կոստանդին Սիմոնեանը, Արմէն Սարգսեանն ու Արմէն Պապախանեանը, Արա Մալիքեանն ու Սէրուժ Գրաճեանը, Հալէպի «Սարգարապատ» պարախումբն ու հանրածանօթ Թաթան՝ իր նուագախումբով, առանց սակայն






Գ. Իփեկեան դատերախումբ:



Թորոս Ռոսլին ակադեմիա



«Արեգ»



Գուսան



անտեսելու գրական հանդիպումներն ու դասախոսությունները, յիշելով եւ յիշատակելով յորբելանները, մեծարելով ու պարզեւատրելով հայ ժողովուրդի արժանաւոր զաւակները:

Որքա՛ն ջլապինդ աշխատանք ու զոհաբերութիւն:

Անշուշտ, այս բոլոր աշխատանքներէն բան մը պիտի տուժէր եւ տուժողը եղաւ Լ. Շանթ կեդրոնը:

Վարչութիւնը կրանուած՝ իր խումբերով, դպրոցներով, Շրջանային նախաձեռնութիւններով, Լ. Շանթ կեդրոնը, որպէս կառոյց, խնամքէ զերծ մնաց եւ ենթարկուեցաւ ժամանակի մաշումին:

Այսօր մշակութային ըմբռումներու չափանիշները փոխուած են. հարկ է վերանորոգուիլ ու թարմութիւն ստեղծել:

Կեդրոնի նորոգութիւնն ու բարեգարգումը դարձած էր կենսական, սակայն բոլորիս ծանօթ տնտեսական կացութիւնը չէր թոյլատրեր նման մեծածախս հարկադրանքներու ձեռնարկել: Բարեբախտաբար, համագլխակա՛ն, մշակութասէր ու մշակութային ձեռնարկները քաջալերող

Արմէնեան ընտանիքը պատրաստակամութիւն յայտնեց մեծ մասամբ ստանձնել ծախսերը, դառնալով մղիչ ուժը: Առաւել գտնուեցան այլ ազգայիններ, Համագլխային բարեկամներ, որոնք սրտաբուխ նուիրատուութիւններով մասնակցեցան, որպէսզի այսուհետեւ ճակատաբաց կարենանք ընդունիլ օտար հիւրեր ու բարեկամներ, աւանդութիւն դարձած ձեռնարկներ իրագործելով ամբողջովին նորոգուած ու բարեկարգուած Լ. Շանթ կեդրոնի «Գ. եւ Հ. Արմէնեան» սրահին մէջ:

Շնորհակալութիւն մեր հայ երեխաներուն ու պատանիներուն, որոնք մեզի առիթ ստեղծեցին նման կառոյց մը պահելու:

Վարձքը կատար բոլոր արուեստագէտներուն, գեղարուեստական դեկավարներուն, բոլոր նուիրատուներուն անխտիր, ծնողներուն, միաւորներուն վարչութիւններուն ու ծնողական յանձնախումբերուն:

Բոլորին յաջողութիւն ու բարի երթ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ